2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տաս հազար) դրամ,

բ. 300 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20 000 (քսան հազար) դրամ.

3)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 000 (տաս հազար) դրամ,

բ. 300 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20 000 (քսան հազար) դրամ.

4)համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ.

5)համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ 10 000 (տասը հազար) դրամ.

6)համայնքի կողմից բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝

- ամսական 269,3 (երկու հարյուր վաթսուն ինը ամբողջ երեք տասնորդական) դրամ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում,

- ամսական 211,9 (երկու հարյուր տասնմեկ ամբողջ ինը տասնորդական) դրամ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր և Ձովք գյուղերում,

բ.ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 (տասը) դրամ.

7) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա.առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) դրամ.

բ.հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 (քսան) դրամ.

գ.վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 (տասնհինգ) դրամ.

դ.գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 (երեք) դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 8 (ութ) դրամ.

ե.արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ) դրամ.

զ.շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն 1-ին կետի 7-րդ ենթակետի «ա-ից ե» պարբերություններով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 1-ին կետի 7-րդ ենթակետի «ա-ից ե» պարբերություններով սահմանված դրույքաչափով.

է.շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է 1-ին կետի 7-րդ ենթակետի «ա-ից ե» պարբերություններով սահմանված դրույքաչափով:

8) շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 (հիսուն) դրամ:

9) շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

10) ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետի «ա»-ից «ե» պարբերություններով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3 000 (երեք հազար) դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 (տասը հազար) դրամ.

գ.ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համայնքի ղեկավարին կամ աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնող անձանց (համայնքային հիմնարկ կամ օպերատոր)՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

11)Սույն որոշման 1-ին մասի 7-րդ ենթակետով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

12)Ջրվեժ համայնքում համայնքի կողմից ջրամատակարարման ծառայության կազմակերպման համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր ջրի համար՝ 70 (յոթանասուն) դրամ կամ՝

բ. ըստ տնտեսության՝ յուրաքանչյուր բաժանորդի համար ամսական՝ 3 000 (երեք հազար) դրամ.

13)համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով 34 109 (երեսունչորս հազար մեկ հարյուր ինը) դրամ.

14)համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության (երաժշտական դպրոց) ծառայություններից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով՝ 25 772 (քսանհինգ հազար յոթ հարյուր յոթանասուներկու) դրամ.

15)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար տեղական վճարը մեկ փաստաթղթի համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ.

16) համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ.

17)Ջրվեժ համայնքի Զովք բնակավայրի հանդիսությունների սրահում միջոցառումների կազմակերպման մեկ ժամվա համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ:

18)համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների տրամադրման ծառայության վճար՝ ամսական 300 (երեք հարյուր) դրամ յուրաքանչյուր հենասյան համար:

2. Սահմանել, որ՝

1)տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով).

2)համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար տեղական վճարը գանձվում է ծառայության մատուցումից առաջ, ընդ որում՝ սույն որոշման 1-ին կետի 13-րդ և 14-րդ ենթակետերում նշված ծառայությունների մատուցման դիմաց տեղական վճարը գանձվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 6-րդ և 12-րդ ենթակետերում նշվածների, որոնց դեպքում տեղական վճարը գանձվում է ծառայությունը մատուցելուց հետո.

3)սույն որոշմամբ սահմանված ծառայությունների մատուցումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական վճարի գումարը չվճարելու դեպքում:

3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել տեղական վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև համայնքի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումը համայնքի պաշտոնական համացանցային www.jrvezh-kotayq.am կայքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2020 թվականի N 89-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել, որ.

1) Ջրվեժ համայնքում կենցաղային աղբահանության ծառայություններից օգտվողների համար 2021 թվականի համար սահմանված աղբահանության վճարի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ աղբահանության վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե վճարողները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձաց) ընտանիքների անդամներ,

2)Ջրվեժ համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար 2021 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

ա. երեխայի ծնողը ազատամարտիկ է և (կամ) զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամ է,

բ. զոհված զինծառայողի երեխա է,

գ. երկկողմանի ծնողազուրկ երեխա է,

դ. հաշմանդամ երեխա է,

3)սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում չներառված համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար 2021 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 6 000 (վեց հազար) դրամ,

4)եթե Ջրվեժ համայնքի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության (երաժշտական դպրոց) ծառայություններից օգտվողներն են սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պարբերություններում նշված անձինք, ապա 2021 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ,

5)սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում չներառված համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության (երաժշտական դպրոց) ծառայություններից օգտվողների համար 2021 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝

ա. 4 000 (չորս հազար) դրամ, եթե երեխան հաշվառված է Ջրվեժ համայնքում,

բ. 6 000 (վեց հազար) դրամ, եթե երեխան հաշվառված չէ Ջրվեժ համայնքում:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը՝

1)1-ին կետի 1-ին ենթակետում նշված դեպքերում՝ Ջրվեժ համայնքի ղեկավարին ուղղված ծառայությունից օգտվող ընտանիքի անդամի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները,

2)1-ին կետի 2-րդ և 4-րդ ենթակետերում նշված դեպքերում՝ Ջրվեժ համայնքի ղեկավարին ուղղված ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի դիմումը, ծառայությունից օգտվողի անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները, հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի որոշման և օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՋՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2020 թվականի N 90-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 24-ի N 171 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծում կատարել համապատասխան փոփոխություն և Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36 և 38-րդ փողոցի թիվ 1 հասցեներում թույլատրել իրականացնելու մանսարդային հարկով եռահարկ շենքերի կառուցում:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ՋՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2020 թվականի N 91-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի պահանջներով, հիմք ընդունելով «ԳԵՈԳԼՈԲԱԼ» ՍՊԸ-ի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 25-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող 07-042-0386-0014 կադաստրային համարի 1199,9 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող 042-0386-0014 կադաստրային համարի 1199,9 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2020 թվականի N 92-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի պահանջներով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գնել Առաքելյանի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող 4408,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում գտնվող 4408,0 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նկատմամբ:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2020 թվականի N 93-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել՝

1)Ջրվեժ համայնքի 2021 թվականի բյուջեն՝

ա.եկամուտների գծով 386,582.0 հազար դրամ,

բ.ծախսերի գծով 969,851.0 հազար դրամ,

գ.դեֆիցիտը (պակասուրդը)՝ 583,269.0 հազար դրամ:

2)Ջրվեժ համայնքի 2021 թվականի բյուջեի եկամուտները ըստ ձևավորման աղբյուրների, համաձայն հավելվածի հատված 1-ի:

3)Ջրվեժ համայնքի 2021 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 2-ի:

4)Ջրվեժ համայնքի 2021 թվականի բյուջեից հատկացումները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 3-ի:

5)Ջրվեժ համայնքի 2021 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելվածի հատված 4-ի:

6)Ջրվեժ համայնքի 2021 թվականի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելվածի հատված 5-ի:

7)Ջրվեժ համայնքի 2021 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելվածի հատված 6-ի:

2.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 15 %-ը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	կողմ (7)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

«Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 25-ի N 93-Ն որոշման

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է համայնքի ավագանու

2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 93-Ն որոշմամբ

ՀԱՏՎԱԾ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ,** **(տող 1100 + տող 1200+տող 1300) այդ թվում՝**		386,582.0	386,582.0	0.0
1100	**1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ, (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1150 + տող 1160) այդ թվում՝**	**7100**	151,986.8	151,986.8	X
1110	**1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից, (տող 1111+ տող 1112), այդ թվում՝**	**7131**	76,751.0	76,751.0	X
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		60,975.0	60,975.0	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		15,776.0	15,776.0	X
1120	**1.2 Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝**	**7136**	61,970.0	61,970.0	X
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		61,970.0	61,970.0	X
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝**	**7145**	13,265.8	13,265.8	X
1131	Տեղական տուրքեր, (տող 1132 + տող 1135 + տող 1136 + տող 1137 + տող 1138 + տող 1139 + տող 1140 + տող 1141 + տող 1142 + տող 1143 + տող 1144+տող 1145+տող 1146+տող 1147), այդ թվում՝	71452	13,265.8	13,265.8	X
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար,		3,200.0	3,200.0	X
1133	աա) Հիմնական շինությունների համար		3,200.0	3,200.0	X
1134	աբ) Ոչ հիմնական շինությունների համար		0.0	0.0	X
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու		30.0	30.0	X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		70.0	70.0	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության		6,405.8	6,405.8	X
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		200.0	200.0	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո		80.0	80.0	X
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		250.0	250.0	X
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կոնսուլտացիաներ տրամադրելու համար		0.0	0.0	X
1144	ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0.0	0.0	X
1145	ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		0.0	0.0	X
1146	ժգ)Ավտոկայանատեղի համար		0.0	0.0	
1147	ժդ)Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար		120.0	120.0	
1148	ժե)Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման իրացման թույլտվության համար		2,410.0	2,410.0	X
1149	ժզ)Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար		0.0	0.0	
1150	ժէ)Այլ տեղական տուրքեր		500.0	500.0	
1150	**1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝**	**7146**	0.0	0.0	X
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր, (տող 1152 + տող 1153), այդ թվում՝		0.0	0.0	X
1160	**1.5 Այլ հարկային եկամուտներ, (տող 1161 + տող 1165) այդ թվում՝**	**7161**	0.0	0.0	X
1161	Օրենքով պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ (տող 1162 + տող 1163 + տող 1164) որոնց՝		0.0	0.0	X
1162	ա) Եկամտահարկ		0.0	0.0	X
1163	բ) Շահութահարկ		0.0	0.0	X
1164	գ) Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ		0.0	0.0	X
1165	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ		0.0	0.0	X
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝**	**7300**	141,091.7	141,091.7	0.0
1210	**2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝**	**7311**	0.0	0.0	X

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման		0.0	0.0	X
1220	**2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից, այդ թվում՝**	**7312**	0.0	X	0.0
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման		0.0	X	0.0
1230	**2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝**	**7321**	0.0	0.0	X
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ		0.0	0.0	X
1240	**2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից, այդ թվում՝**	**7322**	0.0	X	0.0
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ		0.0	X	0.0
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1251 + տող 1254 + տող 1257 + տող 1258), որից՝**	**7331**	141,091.7	141,091.7	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		141,091.7	141,091.7	X
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ, (տող 1255 + տող 1256), այդ թվում՝		0.0	0.0	X
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից		0.0	0.0	X
1256	բբ) այլ դոտացիաներ		0.0		X
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	0.0	X
1258	դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0		X
1260	**2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, (տող 1261 + տող 1262), այդ թվում՝**	**7332**	0.0	X	0.0
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.0	X	0.0

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1262	բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ		0.0	X	0.0
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380+ տող 1390), այդ թվում՝**	**7400**	93,503.5	93,503.5	0.0
1310	**3.1 Տոկոսներ, այդ թվում՝**	**7411**	0.0	X	0.0
1311	Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսներ		0.0	X	0.0
1320	**3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝**	**7412**	0.0	0.0	X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)		0.0		X
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ, (տող 1331 + տող 1332 + տող 1333 + 1334), այդ թվում՝**	**7415**	8,881.5	8,881.5	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		7,332.0	7,332.0	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		0.0	0.0	X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ		0.0	0.0	X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		1,549.5	1,549.5	X
1340	**3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, (տող 1341 + տող 1342+ տող 1343), այդ թվում՝**	**7421**	0.0	0.0	X
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրազուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից		0.0	0.0	X
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		0.0	0.0	X
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձված) վճարներ		0.0	0.0	X
1350	**3.5 Վարչական գանձումներ, (տող 1351 + տող 1352), այդ թվում՝**	**7422**	79,922.0	79,922.0	X
1351	Տեղական վճարներ, որից՝		56,242.0	56,242.0	X
	Ջրվեժի մակական երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի ծառայությունների վճար		4,806.0	4,806.0	0.0

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
	Ձորաղբյուրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ծառայություններն վճար		4,422.0	4,422.0	0.0
	Աղբահանության վճար		28,589.0	28,589.0	0.0
	Ջրի օգտագործման վճար		17,400.0	17,400.0	0.0
	Շինարարության ավարտի փաստագրման վճար		350.0	350.0	0.0
	Աճուրդի մասնակցության վճար		200.0	200.0	0.0
	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախագծագրագրման համար		475.0	475.0	0.0
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		23,680.0	23,680.0	X
1360	**3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից, (տող 1361 + տող 1362), այդ թվում՝**	**7431**	3,200.0	3,200.0	X
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		3,200.0	3,200.0	X
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում գանձվող տույժերից		0.0	0.0	X
1370	**3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ, (տող 1371 + տող 1372), այդ թվում՝**	**7441**	0.0	0.0	X
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված		0.0	0.0	X
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված		0.0	0.0	X
1380	**3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ (տող 1381 + տող 1382)**	**7442**	0.0	X	0.0
1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե		0.0	X	0.0

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին		0.0	X	0.0
1390	**3.9 Այլ եկամուտներ, (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝**	**7451**	1,500.0	1,500.0	0.0
1391	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		0.0	X	
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		0.0	X	0.0
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		1,500.0	1,500.0	0.0

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ, ՀՈՂԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՌԱՆՁԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	ապառքը տարեսկզբի դրությամբ	ապառքը տարեվերջի դրությամբ	տվյալ տարվա հաշվարկային գումարը
		1	2	3
1	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	98,603.6	95,216.6	57,588.0
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար	27,361.9	22,349.8	10,763.9
3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	30,655.3	29,299.5	55,494.2
4	Հողերի վարձակալության վարձավճար	2,487.0	696.0	X
5	Այլ գույքի վարձակալության վարձավճար	555.1	250.0	X

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7 +u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100)**	969,851.0	389,770.0	580,081.0
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180), այդ թվում՝**	117,767.5	114,767.5	3,000.0
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ, որից՝***	107,209.3	104,209.3	3,000.0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	107,209.3	104,209.3	3,000.0
2112	01	1	2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	0.0	0.0	0.0
2113	01	1	3	Արտաքին հարաբերություններ	0.0	0.0	0.0
2120	**01**	**2**	**0**	***Արտաքին տնտեսական օգնություն, որից՝***	0.0	0.0	0.0
2121	01	2	1	Արտաքին տնտեսական աջակցություն	0.0	0.0	0.0
2122	01	2	2	Միջազգային կազմակերպությունների միջոցով տրամադրվող տնտեսական օգնություն	0.0	0.0	0.0
2130	**01**	**3**	**0**	***Ընդհանուր բնույթի ծառայություններ, որից՝***	1,863.2	1,863.2	0.0
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	0.0	0.0	0.0
2132	01	3	2	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	0.0	0.0	0.0
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1,863.2	1,863.2	0.0
2160	**01**	**6**	**0**	***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝***	8,695.0	8,695.0	0.0
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	8,695.0	8,695.0	0.0
2170	**01**	**7**	**0**	***Պետական պարտքի գծով գործառնություններ, որից՝***	0.0	0.0	0.0
2171	01	7	1	Պետական պարտքի գծով գործառնություններ	0.0	0.0	0.0
2200	**02**	**0**	**0**	**Ռազմական պաշտպանություն, որից՝**	830.0	830.0	0.0
2210	**02**	1	0	***Ռազմական պաշտպանություն***	0.0	0.0	0.0
2211	02	1	1	Ռազմական պաշտպանություն, որից՝	0.0	0.0	0.0
2220	**02**	**2**	**0**	***Քաղաքացիական պաշտպանություն***	480.0	480.0	0.0
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն, որից՝	480.0	480.0	0.0
2230	**02**	3	0	***Արտաքին ռազմական օգնություն***	0.0	0.0	0.0
2231	02	3	1	Արտաքին ռազմական օգնություն, որից՝՝	0.0	0.0	0.0
2240	**02**	**4**	**0**	***Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում,***	0.0	0.0	0.0
2241	02	4	1	Հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0		
2250	**02**	**5**	**0**	***Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝***	350.0	350.0	0.0

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7 +u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2251	**02**	**5**	**1**	***Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)***	350.0	350.0	0.0
2300	**03**	**0**	**0**	**Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն, որից՝(տող2310+տող2320+տող2330+տող2340+տող2350+տող2360+տող2370), այդ թվում՝**	800.0	800.0	0.0
2310	**03**	**1**	**0**	***Ոստիկանություն***	0.0	0.0	0.0
2311	03	1	1	Ազգային անվտանգություն	0.0	0.0	0.0
2312	03	1	2	Պետական պահպանություն	0.0	0.0	0.0
2313	03	1	3	Պետական պահպանություն	0.0	0.0	0.0
2320	**03**	**2**	**0**	***Փրկարար ծառայություն, որից՝***	800.0	800.0	0.0
2321	03	2	1	Փրկարար ծառայություն	800.0	800.0	0.0
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տող2480+տող2490), այդ թվում՝**	2,515.0	32,515.0	-30,000.0
2410	**04**	**1**	**0**	***Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ, որից՝***	0.0	0.0	0.0
2411	04	1	1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	0.0		
2412	04	1	2	Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի հարաբերություններ	0.0		
2420	**04**	**2**	**0**	***Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն, որից՝***	3,390.0	3,390.0	0.0
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	3,390.0	3,390.0	
2422	04	2	2	Անտառային տնտեսություն	0.0		
2423	04	2	3	Ձկնորսություն և որսորդություն	0.0		
2424	04	2	4	Ոռոգում	0.0	0.0	0.0
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ, որից՝***	29,125.0	29,125.0	0.0
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	29,125.0	29,125.0	
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝***	-30,000.0	0.0	-30,000.0
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-30,000.0	0.0	-30,000.0
2500	**05**	**0**	**0**	**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550+տող2560), այդ թվում՝**	108,740.6	104,240.6	4,500.0
2510	**05**	**1**	**0**	***Աղբահանում, որից՝***	104,670.6	100,170.6	4,500.0
2511	05	1	1	Աղբահանում	104,670.6	100,170.6	4,500.0
2560	**05**	**6**	**0**	***Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝***	4,070.0	4,070.0	0.0
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	4,070.0	4,070.0	0.0
2600	**06**	**0**	**0**	**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660), այդ թվում՝**	95,378.0	49,878.0	45,500.0
2630	**06**	**3**	**0**	***Ջրամատակարարում, որից՝***	71,504.6	30,604.6	40,900.0
2631	06	3	1	Ջրամատակարարում	71,504.6	30,604.6	40,900.0
2640	**06**	**4**	**0**	***Փողոցների լուսավորում, որից՝***	21,673.4	19,273.4	2,400.0
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	21,673.4	19,273.4	2,400.0
2650	**06**	**5**	**0**	***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝***	2,200.0	0.0	2,200.0

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7 +u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2651	06	5	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	2,200.0	0.0	2,200.0
2660	**06**	**6**	**0**	***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝***	0.0	0.0	0.0
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	0.0	0.0	0.0
2700	**07**	**0**	**0**	**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, (տող2710+տող2720+տող2730+տող2740+տող2750+տող2760), այդ թվում՝**	400.0	400.0	0.0
2710	**07**	**1**	**0**	***Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ, որից՝***	0.0	0.0	0.0
2711	07	1	1	Դեղագործական ապրանքներ	0.0		
2712	07	1	2	Այլ բժշկական ապրանքներ	0.0		
2713	07	1	3	Բժշկական սարքեր և սարքավորումներ	0.0		
2720	**07**	**2**	**0**	***Արտահիվանդանոցային ծառայություններ, որից՝***	400.0	400.0	0.0
2721	07	2	1	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	400.0	400.0	
2800	**08**	**0**	**0**	**ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ, (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860), այդ թվում՝**	3,623.1	3,623.1	0.0
2810	08	1	0	***Հանգստի և սպորտի ծառայություններ, որից՝***	0.0	0.0	0.0
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	0.0	0.0	
2820	**08**	**2**	**0**	***Մշակութային ծառայություններ, որից՝***	1,966.0	1,966.0	0.0
2821	08	2	1	Գրադարաններ	0.0	0.0	0.0
2822	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ	0.0	0.0	0.0
2823	08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	0.0	0.0	0.0
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	1,966.0	1,966.0	0.0
2830	**08**	**3**	**0**	***Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրապարակչական ծառայություններ, որից՝***	252.0	252.0	0.0
2833	08	3	3	Տեղեկատվության ձեռքբերում	252.0	252.0	0.0
2840	**08**	**4**	**0**	***Կրոնական և հասարակական այլ ծառայություններ, որից՝***	1,405.1	1,405.1	0.0
2841	08	4	1	Երիտասարդական ծրագրեր	0.0	0.0	0.0
2842	08	4	2	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	1,105.1	1,105.1	0.0
2843	08	4	3	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	300.0	300.0	0.0
2850	**08**	**5**	**0**	***Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝***	0.0	0.0	0.0
2851	**08**	**5**	**1**	Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0	0.0	0.0
2900	**09**	**0**	**0**	**ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980), այդ թվում՝**	503,233.8	57,173.4	446,060.4
2910	**09**	**1**	**0**	***Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝***	477,201.3	31,140.9	446,060.4
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	477,201.3	31,140.9	446,060.4
2912	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն	0.0	0.0	0.0
2920	**09**	**2**	**0**	***Միջնակարգ ընդհանուր կրթություն, որից՝***	982.0	982.0	0.0
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	0.0		
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն	982.0	982.0	
2950	**09**	**5**	**0**	***Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն, որից՝***	25,050.5	25,050.5	0.0
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	25,050.5	25,050.5	0.0

Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (u.7 +u.8)	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
3000	**10**	**0**	**0**	**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+ տող3060+տող3070+տող3080+տող3090), այդ թվում՝**	4,890.0	4,890.0	0.0
3030	**10**	**3**	**0**	***Հարազատին կորցրած անձինք, որից՝***	180.0	180.0	0.0
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք	180.0	180.0	0.0
3040	**10**	**4**	**0**	***Ընտանիքի անդամներ և զավակներ, որից՝***	2,410.0	2,410.0	0.0
